ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

««ՇԱՆԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով ««Շանթ Պլյուս» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2023 թվականի սեպտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Շանթ Պլյուս» ՍՊԸ (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով վերջինս խնդրել է.

«ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից թիվ ՍՆԴ/1350/04/22 սնանկության գործով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման արդյունքում այդ նորմին տրված մեկնաբանությունը, այնքանով, որ բողոքարկման տասնհինգօրյա ժամկետը հաշվարկելիս հաշվի չի առնվել, թե ՀՀ սնանկության դատարանի բողոքարկման ենթակա 25.10.2022թ. դատական ակտը, երբ է հասանելի դարձել դիմողին և այնքանով, որ բողոքարկման տասնհինգօրյա ժամկետում հաշվարկվել է ոչ աշխատանքային օրերը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ (3-րդ մաս), 28-րդ, 61-րդ (1-ին մաս), 63-րդ (1-ին մաս), 78-81-րդ հոդվածներին հակասող»:

2. Ներկայացնելով թիվ ՍՆԴ/1350/04/22 սնանկության գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ դատական պրակտիկայում բողոքարկման ենթակա դատական ակտը www.datalex.am կայքում մուտք անելը սնանկության վարույթի մասնակցի համար առաջացնում է իրավական հետևանք. մուտք անելու օրը նույնականացնելով հրապարակման օրվա հետ՝ անկախ մուտք անելու ժամից, սկսվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բողոքարկման ժամկետի մեկնարկը:

Դիմողը գտնում է, որ սնանկության վարույթում դատական ակտի հրապարակման ժամկետի մասին նախապես չծանուցվելու պայմաններում դատական ակտի դեմ բողոք բերելու իրավունքի իրացումը լիարժեք կարող է ապահովվել միայն այն դեպքում, եթե բողոքարկման ժամկետի մեկնարկը հաշվարկվի բողոքարկման ենթակա դատական ակտն առձեռն կամ փոստային ծառայության միջոցով հանձնելու կամ դրա՝ տեղեկատվական համակարգում հրապարակված լինելու մասին ծանուցելու օրվանից:

Դիմողը փաստում է, որ «www.datalex.am կայքը նշում չի պարունակում, թե կայքում դատական ակտը երբ է հրապարակվել, իսկ դատական ակտը կայքում տեղադրելու ամսաթիվը չի կարող ընկալվել որպես հրապարակման օր: Եթե անգամ ենթադրաբար համարենք որ կայքում տեղադրելու օրը համընկնում է հրապարակման օրվա հետ, ապա բոլոր դեպքերում այն չէր կարող համարվել պատշաճ, քանի որ www.datalex.am կայքում որևէ նշում առկա չէ, թե որ օրն է համարվում հրապարակման օրը»:

Դիմողը նշում է. «(...) «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված «15-օրյա ժամկետում» բողոքարկելու հաշվարկի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ (3-րդ մաս), 28-րդ, 61-րդ (1-ին մաս), 63-րդ (1-ին մաս), 74-րդ, 78-81-րդ հոդվածներին (...)»:

Դիմողը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված «15-օրյա ժամկետում» դրույթը չի կարող մեկնաբանվել որպես նշված օրենքով սահմանված, ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը բացառող կանոն: Դիմողի պնդմամբ՝ այդպիսի կանոն կարող էր համարվել առկա միայն այն դեպքում, երբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով հատուկ սահմանվեր դատավարական ժամկետների հաշվարկման կարգը, ինչպես սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ գլխի կանոններով:

Դիմողը եզրահանգում է, որ թիվ ՍՆԴ/1350/04/22 սնանկության գործի շրջանակներում վերաքննիչ քաղաքացիական դատարանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասն իր նկատմամբ կիրառել է Սահմանադրության պահանջներին հակասող մեկնաբանությամբ՝ հանգեցնելով վիճարկվող դրույթի կամայական կիրառության: Դիմողի պնդմամբ՝ բողոքարկման ժամկետի հաշվարկի կամայական մեկնաբանությունը և դրանում արհեստականորեն ոչ աշխատանքային օրերի ներառումը չեն բխում անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության միջոցների արդյունավետության երաշխիքներ սահմանելու պահանջից:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական**

նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր: Հակառակ դեպքում՝ նման դիմումներով բարձրացված հարցերը չեն կարող ենթակա լինել Սահմանադրական դատարանի քննությանը, քանի որ դուրս են Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Գործի նյութերի ուսումնասիրությունը Սահմանադրական դատարանին թույլ է տալիս եզրահանգել, որ սույն անհատական դիմումով Դիմողը, **ձևականորեն վիճարկելով** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«Իրավահարաբերության կարգավորման բացակայության և կամայական մեկնաբանություններով ձևավորված պրակտիկայի պայմաններում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը **«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բողոքարկման ժամկետի օրվա սկիզբը սխալ է հաշվարկել, ժամկետի մեկնարկի համար հիմք է ընդունել ՀՀ սնանկության դատարանի որոշումը համակարգ տեղադրելու օրը, առանց հաշվի առնելու, որ համակարգում տեղադրված դատական ակտը սնանկության վարույթի մասնակցին հասանելի է դառնալու՝ հրապարակված է համարվելու, հաջորդ օրը, որի արդյունքում սահմանափակվել է** «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության կողմից օրենքով նախատեսված տասնհինգ օրվա ժամկետում որոշման դեմ բողոք ներկայացնելու, իր գործը դատարանում քննելու իրավունքը»* (ընդգծումը՝ Դիմողի):

Բացի դրանից, Դիմողը վկայակոչել է հետևյալ բովանդակությամբ դիրքորոշում. *«(...) «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունը ՀՀ սնանկության դատա-*

ռանի 25.10.2022թ. թիվ ՍՆԴ/1350/04/22 որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել 10.11.2022թ.-ին, օրենքով նախատեսված բողոքարկման ժամկետի շրջանակում, սակայն բողոքարկվող դատական ակտի էլեկտրոնային համակարգում հրապարակման ժամկետի հաշվարկման իրավակարգավորման բացակայության կամ անհստակության և դրանով պայմանավորված սխալ հաշվարկի արդյունքում հանգեցրել է վերաքննիչ բողոք բերելու իրավունքի սահմանափակմանը»:

Դիմումի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ըստ էության, **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՍՆԴ/1350/04/22 սնանկության գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի բովանդակությանը:** Մասնավորապես՝ **Դիմողը վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **ՀՀ դատարանների, մասնավորապես՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտի) իրավաչափությանը:**

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ տվյալ պարագայում Դիմողը, ձևականորեն վիճարկելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը, ըստ էության, **բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց:**

Սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրելու է ոչ թե վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատում Սահմանադրական դատարանի կողմից, այլ թիվ ՍՆԴ/1350/04/22 սնանկության գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության ստուգում, որը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Ուստի՝ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

3.2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը*

գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված ***այլ դեպքերում:***

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և* ***հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:*** *(…)անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:*

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե* ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:***

Այս առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և տվյալ հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:**

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումով բարձրացրել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարց: **Մինչդեռ,** դիմումի և դրան կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Դիմողը, վիճարկելով վերոնշյալ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության համապատասխանությունը Սահմանադրության 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 3-րդ մասին, 28-րդ հոդվածին, 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 74, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին, **չի հիմնավորել վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրականությունը:**

Այսինքն՝ սույն դիմումով **չի հիմնավորվում Դիմողի կողմից վիճարկվող՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասությունը Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքին և (կամ) ազատությանը:**

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումի շրջանակներում նորմատիվ իրավական ակտի դրույթի՝ իրավա-

կիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության կամ դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացը) հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված առնվազն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Փոխարենը՝ Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ համապատասխանաբար դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ պնդումների պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և նման խախտման ընդհանրությունը, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը՝ սույն կոնկրետ գործի հանգամանքների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ավելին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը Սահմանադրական դատարանին թույլ է տալիս փաստել, որ տվյալ **օրենքով հստակ տարանջատված են այն դեպքերը, երբ օրենսդիրը դատավարական ժամկետների հաշվարկը պայմանավորել է միայն աշխատանքային օրերով, և այն դեպքերը, երբ դատավարական ժամկետների հաշվարկում ներառել է նաև ոչ աշխատանքային օրերը:** Մասնավորապես՝ **բոլոր այն դեպքերում, երբ օրենսդիրը դատավարական ժամկետների հաշվարկը պայմանավորել է միայն աշխատանքային օրերով, հստակ արձանագրել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթում՝ «աշխատանքային օր» ձևակերպմամբ, և հակառակը** *(տե՛ս, օրինակ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39.2-րդ հոդվածի 1-ին մասը և 69-րդ հոդվածի 1-ին մասը):*

Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 1-ին հոդվածին և 3-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Սահմանադրական դատարանն

արձանագրում է, որ դրանք ամրագրված են Սահմանադրության՝ *«Սահմանադրական կարգի հիմունքները»* վերտառությամբ 1-ին գլխում: **Մինչդեռ, կոնկրետ վերահսկողության շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 28, 74, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին, ապա դրանց բովանդակությունից բխում է, որ **դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության լույսի ներքո:**

Հետևաբար՝ սույն անհատական դիմումի շրջանակներում Դիմողի կողմից վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Դիմողի որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման հանգեցնելը չհիմնավորելը բացառում է վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարցի քննարկումը Սահմանադրության նաև 28, 74, 78, 79, 80 և 81-րդ հոդվածների հնարավոր խախտման համատեքստում:

Այսպիսով, սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

««Շանթ Պլյուս» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 նոյեմբերի 2023 թվականի
ՍԴԱՈ-131